ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳԻՐՔԸ ՌՈՒԲԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ

ՍԵՐԳԵՅ ԱԲՈՎՅԱՆ

Հոդվածը անդրադարձ է գեղանկարիչ Ռուբեն Մանուկյանի գրքային գրաֆիկային: Նրա սևեռումները կանգ են առնում գրքի առանձին բաղադրիչների վրա՝ ֆորզաց, բացվածք, գլխատառ և ստեղծում միասնական մի գիծ, որը կերտում է գիրքը՝ որպես կուռ, միատարր հորինվածք:

Ձևավորումների հիմքում ընկած են վառ լոկալ գույները և անիմացիոն շարժական պատկերի հնարավորությունները: Նրա արվեստում ազգայինը միաձուլվում է ընդհանուր մանկական գրքի ստեղծման սկզբունքների հետ՝ դիտողի մեջ ստեղծելով մի ուրույն հոգեվիճակ և տրամադրություն: Երբ իրականը դառնում է հեքիաթային և կախարդական: Գույնը հատուկ դեր է կատարում նկարչի արվեստում՝ հավաքելով իր շուրջը զգացմունքային մի աշխարհ, որտեղ տարվում ես գույնի և լույսի շքեղ տոնական բազմազանությամբ: Այն արվեստագետին բնորոշ սուր տեսողությամբ դիտված և դիպուկ գտնված է: Իսկ պլաստիկ և շատ արտիստական գիծը ստեղծում է շարժում, ռիթմ՝ ենթարկելով և իր հետևից տանելով դիտողին:

Բանալի բառեր – Ռուբեն Մանուկյան, գրքային գրաֆիկա, գունագեղ ներկապնակ, երևակայություն, դեկորատիվ աբստրակցիա, հեքիաթային երկրներ, էկզոտիկ:

Գրքի ձևավորման դարավոր ավանդները ոճավորելով ժամանակակից արվեստի նոր պահանջներին համապատասխան՝ Ռուբեն Մանուկյանը ստեղծում է հայ ազգային ու նոր գրքարվեստի պատկերազարդման մի ամբողջ համակարգ:

Չափազանց դժվար է խոսքի արվեստը կերպավորել նկարչական արտահայտչամիջոցներով, ենթարկվելով գրական տեքստի պահանջներին՝ մնալ անկախ ստեղծագործող, բայց միևնույն ժամանակ գրական նյութը զգալով՝ ստեղծել հենց տվյալ գրքի նկարային պատումը:

Ռուբեն Մանուկյանը ծնվել է 1940թ. Երևանում, սովորել է Փանոս Թերլեմեզյանի անվան ուսումնարանում, այնուհետև՝ Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտում:

1962 – 1980թթ. Մանուկյանը «Ավանգարդ» թերթի գլխավոր նկարիչն էր: Նույն տարիներին կայացան նրա առաջին անհատական ցուցահանդեսները Բեյրութում և Քյոլնում:

Վերջին տասնամյակներում Ռուբեն Մանուկյանը բնակվում է ԱՄՆ-ում: Նրա՝ մանկական գրքի ձևավորումներն արժանացել են բազմաթիվ մրցանակների, որոնցից է 1998թ. Լոս Անջելեսի Art-Expo International–ի վկայականը:

Գրքի ձևավորման ասպարեզում հեղինակը նախընտրում է մանկական գրականությունը: Այստեղ թե՛ հայ հեղինակների երկերն են, թե՛ տարբեր ժողովուրդների հեքիաթները: Նրա ձևավորած գրքերն ունեցել են բազմաթիվ թարգմանություններ և հրատարակվել են տարբեր լեզուներով:

Մեծ հետաքրքրություն է առաջացնում Այբբենարանը, որը երկար տարիներ համարվում է Սփյուռքի մանուկների կարևորագույն «ընկերը»: Վառ գունագեղ մշակումներով նկարիչը հասնում է դիպուկ արտահայտչականության՝ չծանրաբեռնելով հարթությունը երկրորդական կողմնակի տարրերով: Յուրաքանչյուր տառի համար ընտրված են տիպական կերպարային լուծումներ. դրանք մարդկային, կենդանական, բուսական կերպարներ են:

Նրա աշխատանքներում ակնհայտորեն միահյուսվում են գունագեղ ներկապնակն ու լավատեսությունը, գեղագիտական մաքրությունն ու երևակայությունը: Նրա ոճը հիշեցնում է դեկորատիվ անառարկայական արվեստը, սակայն չի հարում և ոչ մի որոշակի գեղարվեստական ոճի: Դրա փոխարեն նկարիչը կենտրոնանում է մի ուրույն մթնոլորտի ստեղծման վրա, որն ազատ է, կայտառ և հանկարծ, անսպասելիորեն լուրջ: Նկարչի լավատեսական մոտեցումը և գեղանկարչին բնորոշ աշխարհայացքը նկատվում են քրոմատիկ գունաշարի և մասնագիտական գրագետ դրսևորումների մեջ, որոնք հաճախ ծնում են նրբագեղ և մասամբ էկլեկտիկ մտահղացումներ:

Նա ստեղծում է անհայտ ժամանակներից եկած աշխարհներ, որոնք կյանք են առնում՝ տեղափոխելով դիտողին հեքիաթային ոլորտներ՝ լի էկզոտիկ էակներով և կերպարներով: Եվ այդ էակները ստանում են բոլորիս ծանոթ դիմագծեր և վարքագծեր. Գրիմ եղբայրների հերոսներն օժտվում են հայ մարդու դիմագծերով, ֆրանսիական հեքիաթում նկարագրվող բնությունը ստանում է Արարատի կամ հայկական արևի դիմագիծ, եվրոպական հեքիաթների հերոսները վերակերպավորում ու վերարժևորում են հայկական հանդերձանքների:

Ռուբեն Մանուկյանին հաջողվում է նկարչին վայել նուրբ աշխարհընկալումով գտնել տիպականը և բնորոշը: Նրա նկարչաոճն այնքան ուրույն է, որ

դառնում է միանգամայն ճանաչելի՝ հյութեղ, կերտող գույն և պլաստիկ, հստակ և միևնույն ժամանակ թրթռուն գիծ:

Ռուբեն Մանուկյանի մանկական ձևավորումներն աչքի են ընկնում երեխայի ներաշխարհին բնորոշ դիպուկ զգացողությամբ, քնարական և նուրբ մշակումներով: Նրանք դառնում են սեփական հոգով անցկացված, զգացած և վերապրած պատկերներ:

Ներքին ձևավորումները հիմնականում էջային են, նախորդում են գրքի մասերին և ներկայացնում են սյուժետային դրվագներ, որոնցում կարևոր տեղ է զբաղեցնում միջավայրը՝ բնապատկեր, ինտերիեր: Գլխավոր կերպարները զբաղեցնում են պատկերի գրեթե ողջ բարձրությունը: Նկարիչը մեծ ուշադրություն է դարձնում հագուստին՝ ներմուծելով հայկական ազգային տարազային տարրեր: Պատկերները լուծված են առանց լուսաստվերային անցումների, խոշոր ծավալներով, սակայն ընդգծելով տվյալ երկին բնորոշ մանրամասները:

Հիմնականում կարծես դիտավորյալ խախտվում են հեռանկարի կանոնները, որի արդյունքում նկարիչը հնարավորություն է ստեղծում կենտրոնանալու այն պահի կամ դետալի վրա, որը կարևորն է նկարչի կարծիքով:

Մանուկյանի գրքային գրաֆիկան մտածված է գրագետ, կատարված է վարպետորեն, անքակտելիորեն կապված է գրական ստեղծագործության բովանդակության հետ, այն մեծապես օգնում է գրողի ստեղծած երևակայական աշխարհի մատուցմանն ու ընթերցողի կողմից գրական մտքի և կերպարների ընկալմանը: Նկարիչը գիրքն ամբողջովին ողողում է նկարներով, որոնք զարմացնում են նկարչի անծայրածիր երևակայությամբ: Նա նոր միջոցներով հասնում է պատկերի զարդարուն լինելուն, որով կոմպոզիցիաները ստանում են կրկնակի հմայք: Նրա խնդիրը միայն խոսքը պատկերային դարձնելը չէ, նա հաղորդում է այն տեսարանները, տրամադրություններն ու զգացմունքները, որոնք գրողը չի նկարագրել խոսքերով, լուսաբանում է ստեղծագործության ոգին նոր ոճական միջոցներով:

Նկարիչը տարածությունը բազմակողմանի է կազմակերպում՝ երբեմն գրեթե դասական հեռանկարչության կանոններով կամ երկտարածական կոմպոզիցիոն սկզբունքներով: Պարզեցված ձևերով, լարված, պայծառ գույներով, պարզ ու նուրբ հումորի երանգավորմամբ գրքերը դառնում են հեքիաթային:

Նրա մոտեցումն ունի խորը ազգային արմատներ: Դրա հետ մեկտեղ ոճն ընդհանրական է, նա աշխատում է մեծ ամփոփումներով, մեծադիր, պլակատային: Հեղինակը հետևում է գրքի դասական կազմակերպման եղանակին՝ կենտրոնանալով գծի արտահայտչականության վրա: Նրա սևեռումները կանգ

են առնում գրքի առանձին բաղադրիչների վրա՝ ֆորզաց, բացվածք, գլխատառ և ստեղծում միասնական մի գիծ, որը կերտում է գիրքը՝ որպես կուռ, միատարր հորինվածք:

Ռուբեն Մանուկյակի մոտեցման հիմքում վառ լոկալ գույներն են և անիմացիոն շարժական պատկերի հնարավորությունները: Նրա արվեստում ազգայինը միաձուլվում է ընդհանուր մանկական գրքի ստեղծման սկզբունքների հետ, որի արդյունքում նրա ձևավորած գրքերը նույնքան խոսուն են բազմազգ կարդացողի համար:

Ձևավորումները ներկայանում են որպես գույնի տոնական հրավառություն՝ դիտողի մեջ ստեղծելով մի ուրույն հոգեվիճակ և տրամադրություն: Երբ իրականը դառնում է հեքիաթային և կախարդական: Եվ այս նոր իրականության մեջ տիրում են անսահման սերն ու բարությունը:

Գույնը հատուկ դեր է կատարում նկարչի արվեստում՝ հավաքելով իր շուրջը զգացմունքային մի աշխարհ, որտեղ տարվում ես գույնի և լույսի շքեղ տոնական բազմազանությամբ: Այն արվեստագետին բնորոշ սուր տեսողությամբ դիտված և դիպուկ գտնված է: Իսկ պլաստիկ և շատ արտիստական գիծը ստեղծում է շարժում, ռիթմ՝ ենթարկելով և իր հետևից տանելով դիտողին: Ոչ մի ավելորդ կամ անզգույշ գիծ և վրձնահետք չկա: Այդպես լինում է, երբ տաղանդն ու ներշնչանքն օրգանապես միասին են բխում:

ДЕТСКАЯ КНИЖНАЯ ГРАФИКА В ТВОРЧЕСТВЕ РУБЕНА МАНУКЯНА

СЕРГЕЙ АБОВЯН

В статье исследуется книжная графика Рубена Манукяна. Здесь беспрепятственно переплетаются оптимистическая красочная палитра с фантазией, одинаково привлекая внимание как знатоков, так и нетребовательных зрителей. Его стиль напоминает декоративную абстракцию, хотя и не является отражением чистого стиля. Художник сосредотачивается на создании атмосферы, которая то серьезна, то игрива и свободна. Красочные хроматические цветовые гаммы вместе с уравновешенностью, рождают изящные, а иногда и эклектичные идеи. Он создает миры из другого времени, которые оживают, перенося зрителя в сказочные страны, полные экзотических существ и персонажей. Но при этом всегда наделяет персонажей знакомыми характеристиками: это армянское солнце, деревья, цветы и горы, все, что однажды повлияло на его стиль и палитру.

Ключевые слова – Рубен Манукян, книжная графика, красочная палитра, фантазия, декоративная абстракция, сказочные страны, экзотические.

CHILD BOOK GRAPHICS OF RUBEN MANUKYAN

SERGEY ABOVYAN

The article is a study of Ruben Manukyan's book graphics. His ventures is confined within single components of the book, a forzats , an aperture, a cap and so on thus creating a unified line, which composes the book as a solid homogeneous composition.

The basis of Manukyan's book graphics is the familiar bright homeland colors as well as the animated portable image possibilities. In his art, the sense of nationality is fused with the general child book creation principles generating in the viewer the mood of the story and a unique spirit and thus transfiguring the real into the magical and fairy-tale. Color plays a special role in Manukyan's art. By creating a whole world of emotions and feelings around himself, Manukyan totally engrosses you in the lavish colorful festive diversity of color and light. This is the outcome of the observed and discerned by Manukyan's piercing vision which also is typical of all other artists. Moreover his plastic and the very artistic line creates a motion, a rhythm making the onlooker comply and go along with him.

Key words – Ruben Manukyan, book graphics, colourful palette, decorative abstraction, fairyland, exotic.